

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՀԱՄՄԻԿ ԽԱՉԻԿԻ ՀԱԿՈՐԹԱՆ**

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ՊՈԵԶԻԱՆ (1990-2005 ԹԹ.)**

**Ժ. 01. 02. - «Հայ նորագույն գրականություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության**

**Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր**

**ԵՐԵՎԱՆ - 2015**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական  
համալսարանում:

Գիտական ղեկավար

բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ  
**Գրիգորյան Մեյրան Զավենի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
**Ավետիսյան Զավեն Վասիլի**

բանասիրական գիտությունների  
թեկնածու  
**Ավանեսյան Արմեն Ավանեսի**

Առաջատար կազմակերպություն՝

**ՀՀ ԳԱԱ Մասնուկ Արեղյանի անվան  
գրականության ինստիտուտ**

Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. ապրիլի 15-ին՝ ժամը 14<sup>30</sup>-ին,  
ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՀ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի  
նիստում:

Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան 52ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆա-  
կուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. մարտի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝  
բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր

**Ա. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ**



## **Աշխատանքի ընդհանուր բնութագիրը**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք իրենց հերթին բաժանված են ենթագլուխների, ինչպես նաև եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից: Առաջին՝ «Գեղագիտական ակունքները» գլխում անդրադարձել ենք անկախությանը նախորդած տասնամյակների բանաստեղծական սերունդների և ուղղությունների գեղագիտական և գաղափարական համակարգերին: «Աշխարհակառուցման մոդելը» վերնագրով երկրորդ գլխում ցույց ենք տվել, թե պատմական տարերային ժամանակը, սոցիալական նոր արժեքային համակարգերը գաղափարական ինչ վերաձևակերպումների են տարել մշակույթն ու գրականությունը: Երրորդ՝ «Բանաստեղծության տարածությունը» վերնագրով գլխում ցույց ենք տվել, որ ժամանակակառուցման մասով շրջափուլային այս հատվածը նախընթաց փուլի անժամանակային ժամանակի անմիջական իրավահաջորդն է: Խոսքն ու բառը՝ որպես նախասկիզբ գոյություն, դառնում են ժամանակային քառսի հաղթահարման միակ նախադրյալը: Ժամանակը բովանդակավորման, տարածական հարթություն՝ երկիր կառուցելու փորձ է ձեռնարկում: Պետականություն կառուցելու նպատակով սկսված ինքնորոշման պայքարը (որն անկախության այս շրջափուլի նախասկիզբն է նաև), շուրջ մեկ տասնամյակ հետո պոեզիայի տարածության մեջ կայացման հնարավորություն է ստանում:

### **Ուսումնասիրության առարկան, նպատակն ու խնդիրները**

Աշխատանքի ուսումնասիրության **առարկան** անկախության շրջանի պոեզիայի (մամուլ, առանձին բանաստեղծական ժողովածուներ) համապատկերային դիտարկումն է: Նյութի ուսումնասիրության **նպատակն** է՝ ցույց տալ՝ գեղագիտական, թեմատիկ-գաղափարական ի՞նչ փոփոխություններ է կրել պոեզիան, զարգացման ի՞նչ հեռանկարներ ու միտումներ են ուրվագծվում: Ուսումնասիրության **խնդիրներն են**՝ պարզել, թե ինչ դերակատարություն են ունեցել բանաստեղծական սերունդներն ու առանձին բանաստեղծները անկախության պոեզիայի ձևավորման վրա, ինչ փոփոխություններ է կրել նրանց պոեզիան պատմական ժամանակների հետ փոխշփման արդյունքում:

### **Թեմայի մշակվածությունն ու աշխատանքի գիտական նորույթը**

Անկախության շրջանի հայ պոեզիան մշտապես եղել է քննադատության ու շահադրության կենտրոնում, սակայն փաստ է նաև, որ կան ակնհայտ բացթողումներ՝ ընդհանուր օրինաչափությունների վերհանման, գրական ընթացքը միասնականացնող միտումների վերլուծման տեսանկյունից: 1990-ական թթ.

կեսերից, երբ քիչ թե շատ հստակվեցին նոր ժամանակներում գրականության դերի ու գործառնությունների, ազգային և համաշխարհային ավանդույթների շարունակման ձևերի և այլ հարցերի շուրջ քննարկումները, քննադատության մեջ հայտնվեցին պոեզիային նվիրված ընդհանրացնող հրապարակումներ: Հիշատակելի է հատկապես Մեյրան Գրիգորյանի «Գրական մամուլ, 1995» տարեկան տեսության «Բանաստեղծություն» բաժինը, որը, չնայած ընդգրկում էր պոեզիայի մեկ տարվա վերլուծություն, սակայն վերհանում էր վերջին տարիների պոեզիայի զարգացման հատկանշական որոշ կողմեր: «Հայաստանի պոեզիան անկախության շրջանում» զեկուցման մեջ (2001թ.) Ս. Գրիգորյանը մի փոքր այլ դիտանկյունից է արժևորումներ կատարում, թեպետ նախընտրելի հեղինակները, գնահատելի միտումները չեն փոխվում: Այնուամենայնիվ, զեկուցումը մնում է որպես այդ շրջանի բանաստեղծությունը արժևորող և խորքային վերլուծությունների մղող առաջին ընդգրկուն ուսումնասիրություն:

Հետանկախության տարիներին գրված բազմաթիվ գրախոսություններում, տեսական հոդվածներում արտահայտած վերլուծությունները ամբողջացնելով՝ 2006-ին Ժենյա Քալանթարյանը հրատարակեց «Ուրվագծեր արդի հայ գրականության» ուսումնասիրությունը, որն առաջին մենագրական անդրադարձն է գրականության այդ շրջափուլին:

Պոեզիայի ընթացքին և առանձին բանաստեղծներին քննական ուսումնասիրություններով ու հոդվածներով հաճախ է անդրադարձնում Մուրեն Աբրահամյանը: Նրա հրապարակումները, մասնավորապես՝ «Տեքստ և բնագիր» (2010) ժողովածուի՝ պոեզիային նվիրված բաժինը ընդարձակում են արդի հայ պոեզիայի քննադատական ճանաչողության սահմանները:

Արդի հայ պոեզիայի տարաբնույթ խնդիրներին պարբերաբար անդրադարձել են նաև Վազգեն Գաբրիելյանը, Մերգեյ Մարիյանը, Զավեն Ավետիսյանը և այլք: Հետաքրքիր են նաև նոր սերնդի քննադատների (Միրանուշ Մարգարյան, Արքմենիկ Նիկողոսյան, Արմեն Ավանեսյան, Հայկ Համբարձումյան) անդրադարձները, որոնք մի կողմից առաջարկում են մոտեցման նոր, ավանդականին ինչ-որ տեղ հակադրվող ձևեր, մյուս կողմից՝ ներսից են հետևում տեղի ունեցող զարգացումներին:

Մեր ատենախոսության մեջ, հենվելով նախկինում գրաքննադատության ամրագրած կարևոր օրինաչափությունների, միտումների վրա, փորձել ենք անկախության պոեզիայի ամբողջական համապատկեր տալ գեղագիտական, գաղափարական իրողությունների, պոետիկական յուրահատկությունների, բովանդակային հարցադրումների մասնավորմամբ, և այդ ամենը՝ պատմական ժամանակի ընդհանուր համապատկերի մեջ:

## **Աշխատանքի տեսական ու մեթոդաբանական հիմքը**

Ատենախոսության մեթոդաբանության հիմքում ընկած են դասական գրականագիտության փորձը և արդի գիտության նվաճումները: Կիրառվել են պատմական, համեմատական-տիպաբանական մեթոդները, ժամանակագրական և գրական երկերի վերլուծության համակարգային և ամբողջական վերլուծության սկզբունքները:

## **Թեմայի արդիականությունն ու գործնական նշանակությունը**

Անկախության շրջանի պոեզիայում բազմաթիվ խնդիրներ դեռևս մնում են չվերլուծված կամ ոչ լիարժեք ներկայացված: Հատկապես՝ պետք է նշել պարբերացման խնդիրը, որը հպանցիկ քննարկումների է ենթարկվել, և, ըստ էության, առ այսօր մնում է չորոշարկված: Այն դեպքում, երբ պոեզիայի ընթացք վերլուծելիս պարբերացմամբ պայմանավորված մի շարք իրողություններ կարող են վճռորոշ դերակատարում ունենալ ընդհանրացումներ կատարելիս: Մյուս կողմից՝ քննադատությունը, օրինաչափություններ վերլուծելիս և միտումներ ներկայացնելիս հիմնականում շեշտը դրել է մի քանի կրկնվող հեղինակների ստեղծագործության վրա, այդ պատճառով ստացվել է ինչ-որ առումով միակողմանի պատկեր: Ընթացային զարգացումների առումով որոշ ուշագրավ բանաստեղծներ մնացել են վերլուծությունների լուսանցքում, այնինչ արժանի են լուրջ ուշադրության:

Աշխատանքը կարող է օգտակար լինել արդի հայ գրականությամբ զբաղվող գիտնականների, ուսանողների, ինչպես նաև արդի պոեզիայով հետաքրքրվող լայն լսարանի համար:

## **Ուսումնասիրության փորձաքննությունը**

Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության: Աշխատանքի հիմնադրույթները և եզրահանգումները արտացոլված են հանրապետության գիտական հանդեսներում հրապարակված հոդվածներում (տե՛ս հրապարակումների ցանկը սեղմագրի վերջում):

## **Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը**

Ատենախոսությունը բաղկացած է Ներածությունից, համապատասխան տրոհում պարունակող երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացվում է հարցի պատմությունը, հիմնավորվում է աշխատանքի արդիականությունը, ինչպես նաև պատճառաբանվում կառուցվածքը:

### Գլուխ առաջին

#### ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Անկախության շրջանի հայ գրականության ձեռքբերումներն առավել հստակ պատկերացնելու համար անհրաժեշտ է որոշակի ընդհանրականությամբ ներկայացնել նախընթաց տասնամյակների բանաստեղծական սերունդների և ուղղությունների գեղագիտական ու գաղափարական համակարգերը: Ընդհանուր համապատկերի այդ դիտարկումները օգնում են հասկանալու՝ ինչ ժառանգություն է ստացել անկախության պոեզիան նախընթաց գործընթացներից, և ինչ դիմակայության են ենթարկվում այդ գեղագիտական համակարգերը՝ աշխարհաստեղծման նոր մոդելի հանդիպելով:

**ա) Դասական բանաստեղծություն և ավանդույթ:** 1990-ականների սկզբին գրական դաշտում, թերևս գրաքննադատության մեջ գերիշխող ինտելեկտի ուժով, կարևոր դերակատարություն էր վերապահված գրական ավագանուն՝ Համո Սահյան, Վահագն Դավթյան, Սիլվա Կապուտիկյան, Հրաչյա Հովհաննիսյան, Մարո Մարգարյան, Գևորգ Էմին: Ակնկալվող կանխատեսումը, որ հենց այս բանաստեղծները պետք է ստանձնեն պոեզիայի զարգացման պատասխանատվությունը, կարճ ժամանակում ապացուցեց իր անհրականանալիությունը. դասական, քնարական ու կանտոնիկ պոեզիա ստեղծող գրական ավագանուց և ոչ ոք չկարողացավ հաղթահարել սահմանաբաժանային պատկերը և նոր ժամանակային ընկալմանը համապատասխան պոեզիա ստեղծել: Վ. Դավթյանի «Հողմաշունչ գիշերները» (1995), Հր. Հովհաննիսյանի «Դաժան դրախտավայրը» (1993), «Մենության օրերը» (1996), Ս. Կապուտիկյանի «Տագնապները» (1994), «Վերջին զանգը» (2006) մի քանի ընդհանրություններ են վերհանում և՛ ժողովածուների վերնագրերի, և՛ բովանդակային ընդհանրության առումով:

**բ) 60-ականների բանաստեղծական սերունդ. նորարարություն և «անբանաստեղծական» բանաստեղծություն:** Անկախության պոեզիայի ժառանգության ամենակարևոր հետահայաց դիտարկումը կապված է 1960-ականների բանաստեղծական սերնդի պոեզիայի գեղագիտական չափանիշների վերհանման, վերաբժնորման հետ: Առաջինը «անբանաստեղծական», ազատ բանաստեղծության մոդելի կիրառումն է, ինչպես նաև՝ ժամանակի ու տարածության ոչ միագիծ ընկալումը, բանաստեղծության լեզվի սահմանների ընդլայնումը, փոխաբերության պատկերի մեծացումը, հեզնանքը, բարձունքում կանգնած քնարական հերոսի իջեցումը, մշակութաբանական շերտերի կիրառումը:

Առանձին ստեղծագործություններով հանդես գալով գրական մամուլում՝ բանաստեղծների այս խումբը (Հովհ. Գրիգորյան, Հենրիկ Էդոյան, Արտեմ Հարությունյան, Դավիթ Հովհաննես, Արմեն Մարտիրոսյան, Սլավիկ Չիլոյան) 1960-ականների վերջին արդեն որպես գրական սերունդ՝ սեփական մանիֆեստով և պոեզիայի զարգացման գեղագիտական առաջադրումներով, սկսեց տպագրվել «Գարուն» ամսագրում՝ գրական շրջանակներում առաջ բերելով լուրջ բանավեճեր ու ընդդիմություն:

Մերնդի՝ անկախության առաջին տարիներին հրատարակված գրքերից հատկապես առանձնանում է Հովհ. Գրիգորյանի «Հրեշտակներ մանկության երկնքից» (1992) ժողովածուն, որը մի կողմից՝ ցուցադրում է պատմական երկու ժամանակների հանդիպումը միևնույն հարթության մեջ, մյուս կողմից՝ վերհանում սերնդի գեղագիտության ամենաբնորոշ կողմերը:

60-ականների պոեզիայի մեկ այլ ինքնատիպ դրսևորում է Հ. Էդոյանի բանաստեղծությունը՝ մետաֆորային, ներքին, փակ շրջագծով ընթացող ժամանակային շարժմամբ: Այն անվերջորեն դրսից դեպի ներս սուզվող ներհայեցային մտորումների ընթացք է: Առաջին պլանում դուրսն է՝ իր պասիվ հայեցողությամբ, փաստացի ներկայությամբ՝ մարդաշատ փողոց, սրճարան, երկրորդ պլանում՝ իրական ապրումը՝ հուշին հանձնվող անցյալի մեջ

Իրենց բանաստեղծական մուտքից շատ տարբերվող ընթացք ընտրեցին Դ. Հովհաննեսն ու Ա. Հարությունյանը:

**զ) Լեզուն որպես ծես. «լեզվապաշտներ»:** Ձևավորման որոշակի ներքին փուլ անցնելով, հաղթահարելով 60-ականների բերած հեղափոխական գեղագիտությունը, և սեփական բանաստեղծական չափանիշներ ամրագրելով՝ 1970-ականների վերջերին պոեզիայում հայտնվեցին գրական շրջանակներում «լեզվապաշտ» անվանումը ստացած բանաստեղծության հետևորդները՝ Աշոտ Ավդալյան, Հակոբ Մովսես, Հրաչյա Բեյլերյան, հետագայում նաև՝ Ադվան Վարդանյան, Զավեն Բեկյան, Գագիկ Կիլիկյան, Գագիկ Սարոյան: Բանաստեղծական այս շարժման հետևորդների համար առաջնային կարևորություն ունի լեզվի բանաստեղծական գործառույթը, նրա տարանջատումը կենցաղային, սպառողական օգտագործումից: Ծագումնաբանորեն շարժումը սերում է միջնադարյան հայ տաղերգության տաղաչափական ու լեզվական ակունքներից, մեծ տեղ հատկացնում աստվածաշնչյան, դիցաբանական արտատեքստային հղումներին: Շարժման ամենաակնառու ներկայացուցիչը Աշոտ Ավդալյանն է: Նրա մահից հետո սերնդի գեղագիտական սկզբունքների իրացման հետևողական շարունակություն գտնում ենք Հակոբ Մովսեսի պոեզիայում: Տեսական հողվածներով, հարցազրույցներով, ինչպես նաև սեփական պոեզիայով Մովսեսը լավագույնս ամբողջացնում է բանաստեղծության այս տեսակի ներկայությունը մեր պոեզիայում:

Մովսեսից բացի՝ սերնդի բանաստեղծությունն անխառն պահելու ձգտումը նկատելի է միայն Հրաչյա Բելլերյանի պոեզիայում. մյուս բանաստեղծները այս կամ այն չափով փորձել են երկխոսության գնալ ժամանակի հետ:

Անկախության առաջին տարիների սոցիալ-քաղաքական վայրիվերումները, բանաստեղծությանը արժեքային նոր գործառույթներ հասկացնելը սասանեցին բանաստեղծական այս հոսանքի հիմքերը: Այսօր կարելի է փաստել, որ բանաստեղծության այս տեսակը, մեծ հաշվով, անկարող եղավ հարաբերվելու պատմության ժամանակի հետ:

**դ) 80-ականների բանաստեղծական միտումները:**- Անդրադառնալով 80-ականների պոեզիայի առանձնահատկություններին ու գեղագիտական համակարգերին՝ դժվար է սերնդային ընդհանուր բանաստեղծական գեղագիտության մասին խոսել: Բհարկե, որոշ տարանջատ հարցերում ընդհանրություններ նկատելի են, սակայն, մեծ հաշվով, 80-ականների պոեզիան առավելապես ազատ տարածություն է, որտեղ պոետական հայեցակարգերն ու սերունդները որոշակի ճշգրտումներ են կատարում: 1970-ական թթ. և 80-ականների սկզբին մի ամբողջ խումբ բանաստեղծների մոտ չեզոք բնակարչություն է, գյուղերգական, երգրի կարոտի, հավերժական ժամանակի վկայակոչմամբ, մետաֆորից մետաֆոր ձգվող բանաստեղծական տող (Էդ. Միլիտոնյան, Ղ. Սիրունյան, Շ. Բելլերյան, առաջին ժողովածուներում նաև՝ Ա. Շեկոյան):

80-ականների երկրորդ կեսն արդեն նոր խմորումների, ընդվզումների մթնոլորտում էր. գրական դաշտում էին մի խումբ երիտասարդներ (Վիոլետ Գրիգորյան, Վահրամ Մարտիրոսյան, Խաչիկ Մանուկյան, Սամվել Զուլոյան, Սիփան Շիրազ, Աշոտ Խաչատրյան, Արմեն Դավթյան, Մարինե Պետրոսյան), ովքեր բանաստեղծական չափանիշների նորացման խնդիրներ էին դնում, խաղարկային, ոչ ստանդարտ ձևեր օգտագործում, լեզվական նոր շերտեր ներգրավում բանաստեղծության տարածք:

Սերնդի ամենահամարձակ ու ինքնատիպ ներկայացուցիչը Վիոլետ Գրիգորյանն է: Նրա պոեզիան՝ ազատության իր ներքին պոռթկմամբ, բանաստեղծություն կազմաքանդող, նոր լեզվական իրականություն ստեղծող ներկայությամբ, մնում է անկախության պոեզիայի սկզբնական շրջանի ամենաարժեքավոր վկայություններից մեկը:

Անտիպոեզիայի աղմկոտ ներկայության մեջ անկախության բանաստեղծությունը (նաև գրականագիտական միտքը) պատշաճ ուշադրության չարժանացրեց դասական կառույցով, մշակութային հենքի խաղարկմամբ նոր ինտելեկտուալ բանաստեղծության ներկայությունը (Շ. Թամրազյան, Ն. Աթաբեկյան, Վ. Աթաբեկյան, Ա. Եփրեմյան, Շ. Ալեքսանյան, Ա. Դավթյան): Բանաստեղծականն այս սերնդի զարգացման ընթացքը 90-ականներին մեծ հաշվով կիսաանտեսված մնաց: Առավել ակտիվ այս հեղինակները սկսեցին տպագրվել և գնահատականի արժանանալ միայն 2000-ական թվականներին:



**Գլուխ երկրորդ**  
**ԱՇԽԱՐՀԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄՈՂԵԼԸ**  
**(Ժամանակաընկալումը, գաղափարական փոփոխություններն ու**  
**գեղագիտական կողմնորոշվածությունը)**

Անկախության պոեզիայի հիմնական **գեղագիտական** կողմնորոշվածությունը նախորդ գործընթացների արդյունք է: Ջուտ գեղագիտական չափանիշների կիրառման առումով անկախության պոեզիան ոչ այնքան նորարարությունն բերեց, որքան նախընթաց նորարարական ձգտումներով ստեղծագործող բանաստեղծական հոսանքներին շնորհեց փաստական, իրավական կարգավիճակ՝ նրանց գրական գործընթացի լիարժեք մասը դարձնելով: Մակայն **գաղափարական, աշխարհակառուցման** մեթոդի ընտրության մասով անկախության պոեզիայի առջև շատ լուրջ խնդիր էր դրված:

**ա) Ժամանակային անժամանակություն. ջրհեղեղ:**- Անկախության ու նախաանկախության տարիների սահմանաբաժանը, զուտ պատմական-ժամանակագրական իմաստով, ընդամենը մի քանի տարվա հեռավորություն է, սակայն ժամանակի ընթացակարգերի փոփոխության դիտանկյունից՝ տարբեր դարաշրջանային իրողություն: Խորհրդային իրականության կանոնիկ, հնգամյակներով ամբողջացող ցիկլային «դանդաղ ժամերին» փոխարինելու էր եկել նոր ժամանակ, որն արագության, շարժման հետագծի անկանխատեսելի ընթացք ուներ: Իրականությունների բախումն առաջ է բերում ժամանակային այն հողմապտույտը կամ անկախության պոեզիայի ամենաբնորոշ մետաֆորով անվանված՝ **ջրհեղեղը**, որն իր հորձանքի մեջ է առնում մարդուն, առաջացնում իրականության մեջ մոլորվածության զգացողություն, ժամանակի **անժամանակություն:** Ժամանակը չի բովանդակավորվում, չի կայանում որպես պատմություն: Ներկան մոլորված է, ապագան՝ անհեռանակար:

Մեր իրականության մեջ 1990-ականների նախասկզբը (պատերազմական, շրջափակված իրականություն, մութ ու ցուրտ ձմեռներ, հասարակական, սոցիալ-տնտեսական նոր հարաբերություններ, բարոյահոգեբանական ճնշվածություն), անգորություն ու անհեռանակար ապագան գործի դրեցին համաշխարհային ջրհեղեղի միջակայս կառույցը: Միջակայս ջրհեղեղն անկախության պոեզիայի ամենաբնորոշ մետաֆորն է, որ ոչ միայն մարմնավորում է հետանկախության տասնամյակի ժամանակային գաղափարական ուղղվածությունը, այլև ընդհանրական ձևակերպում ստանալով՝ վերածվում է հնի ու նորի, գաղափարական ու գեղագիտական տարբեր համակարգերի պայքարի: «Պատկերը դառնում է գրեթե համապարփակ բանաձևում և փոխանցվում ամբողջ բանաստեղծական շարժմանը:

Կարելի է վստահաբար պնդել, որ Նոյի ու ջրհեղեղի պատկերը Հայաստանի արդի բանաստեղծության ամենից բնութագրական փոխաբերությունն է<sup>1</sup>:

Անհեռանկար ապագան անգորության ալիք է առաջ բերում և ստիպում գրողին գնալ հիմնարար փոփոխությունների: Դարավերջ-վերջնասահմանը, նաև երկրի սոցիալ-տնտեսական վիճակը (մութ, խավար, ցուրտ ձմեռներ) իրենց տրամադրության տակ են վերցնում ամբողջ իրականությունը, դառնում ահագնացող տրամադրություն, աշխարհի վերջի և Ահեղ Դատաստանի կանխատեսում: Աշխարհի վերջի աներկբա (առանց վերածննդի հույսի) ապոկալիպտիկ կանխատեսումները ներկայանում են հատկապես Հովհաննու «Հայտնության» և համաշխարհային մշակույթի պատմադիցաբանական շերտերից եկող Նոյի, Նեռի, Դեղին Մոլոքի, Մեծ մոդոլի սիմվոլների միջոցով:

Ջրհեղեղային իրականությունն իր ամբողջ գաղափարական ու գեղագիտական ենթաշերտերով գծագրվում է հատկապես Հովհ. Գրիգորյանի «Երկու ջրհեղեղի արանքում» ժողովածուում: Ժամանակային երկու ընթացակարգեր՝ սկիզբ, մանկության վերհուշ, նախաջրհեղեղյան հասարակ մարդկային առօրյա և ներկա սոցիալականացված, աններդաշնակ, պրոգայիկ ու անբանաստեղծական, որոնք միմյանց են բախվում ժամանակի, իրականության, նյութի, գեղագիտական հայեցակարգի, իդեալների ոլորաններում: Փոխվել է բանաստեղծության նյութը. սոցիալական խնդիրները մարդկային կյանքի առաջնագիծ են մղվել: Առօրյա կյանքում մոլորված «փոքր մարդուն» փոխարինելու է եկել սոցիալական հոգսերի տակ կքած «ընչագուրկ քաղաքացին»:

Առաջնային օրակարգ մտցնելով սեփական լինելության հարցը՝ պոեզիան իր իսկ դիմառնությամբ վերաձևակերպումների է ենթարկում նախկին գաղափարական ուղղվածությունը, թեմաների ընտրությունը, նոր չափանիշներ ու իդեալներ սահմանում: Հասարակական գործառույթներ իրականացնող, փաստական նյութով հագեցած պոեզիան երևակվում է հատկապես անկախության առաջին տարիների բանաստեղծություններում:

Փաստական, վավերագրական նյութի հագեցվածությամբ աչքի է ընկնում Արտեմ Հարությունյանի և Դավիթ Հովհաննեսի պոեզիան: Ա. Հարությունյանի «Նամակ Նոյին» (1997) ժողովածուն բանաստեղծական նոր ձևի, հզոր շնչի, մետաֆորային հագեցվածություն և սոցիալ-քաղաքական կողմնորոշվածություն ունեցող ինքնատիպ երևույթ է: Ստեղծագործության նախընթաց փուլում մետաֆիզիկական ճանաչողության միտված բանաստեղծն իր պոեզիայի ներկա ընթացքի առաջնային թիրախ դարձրեց իր ապրած ժամանակը:

Անկախության պոեզիայի ընդգրկուն այս տարածության մեջ պատմություն վավերագրողի իր կեցվածքով հայտնի է Դ. Հովհաննեսը: Անկախության շրջանում լույս տեսած նրա երկու ժողովածուները «Քրոնիկոն» (1996) և «Նոր

<sup>1</sup> *Սերյան Գրիգորյան*, Բանասիրություն և բանավեճ, էջ 217:

Քրոնիկոն» (2007), մեր ապրած իրականության սոցիալական ու քաղաքական տարեգրությունն են:

Պատերազմական (բառի ընդգրկուն իմաստով) ու սոցիալական իրականությունը այնքան է ներխուժել առօրյա կյանք, որ մարդը կարծես կարծրացել է, ապրում է անգոյության ու օտարման տարածությունում, բնության ավանդական ներդաշնակող զուգահեռումներին փոխարինելու է եկել սոցիալականացված բնությունը: Շրջափակված Հայաստանում՝ անլույս ու անջեռուցում, ձյուն ու ձմեռը դիմակայության նոր ցուցիչներ դարձան՝ փոխելով նաև բնության երևույթների հանդեպ մարդկային ընկալունակությունը:

**բ) Բանն ու գիրը՝ որպես իրականության կառուցող նախանյութ:** Գրողի՝ իրականության տարածաժամանակային տարբեր հարթություններից կատարած դիտարկումների, բանաստեղծության առանցքի ու դերակատարության տարբեր մոտեցումների արդյունքում հաճախ պատմական միևնույն ժամանակի մեջ ստեղծվող գրական երկերը իրականության բռնորովին այլ պատկեր են վերարտադրում: Սկզբունքորեն տարբեր աշխարհընկալումների հիմքում կարևոր դեր է վերապահված ժամանակի արտաքին (պատմական) և ներքին (բացարձակ) ընթացքի վավերագրմանը: «Ուղղահայաց ժամանակը գործողության ժամանակը չէ, այլ դիտահայման ժամանակն է, որն ընթացիկ հոսքից դուրս է թողնում արարումն ու ավերումը: Այն հավերժական շարունակվող ներկան է: Մենք ապրում ենք ֆիզիկական, հոսող ժամանակի մեջ, բայց քանի որ այն մեզ չի բավարարում (գոնե մինչ 19-րդ դար այդպես է եղել), գեղագիտական ջանքերի շնորհիվ կառուցում ենք այն շարունակվող ներկան, որի կարիքն այդքան ունենք: Ըստ էության, այն ոչ թե սլաքի, այլ խաչի ժամանակն է»<sup>2</sup>: Եվ ահա ներքին, «խաչի ժամանակի» տեղանքում, որն ըստ էության Բանի ու Գրի ներքին տարածություն է, սեփական բանաստեղծական տեքստը՝ Գրվածքն են փորձում կառուցել Հ. Թամրազյանը, Ա. Եփրեմյանն ու Ն. Աթաբեկյանը:

Բանն ու գիրը՝ որպես իրականության կառուցող նախանյութ, ընդգծված արտահայտություն ունեն հատկապես Ա. Եփրեմյանի պոեզիայում («Աստղաքայլ» (1992), «Մեկնության ժամանակը» (1998), «Գրվածք» (2007), «Վարք. Սևագրություն» (2013)): Եփրեմյանի պոեզիան խիստ կանոնիկ, չափաբերական, ռիթմիկ տեքստ է, ներքին մեծ ձգողականությամբ և սեփական աշխարհակառուցման մոդելի առաջադրմամբ, որտեղ առանցքային դերակատարություն է հատկացված գրին: Բառերն ու իմաստներն այնպիսի ներքին մեծ ձգողականություն են ցուցաբերում, որ տեքստին տարբերություն հնարավորություն չեն ընձեռում, հարկադրում են միաբնագիր մեկնության:

---

<sup>2</sup> *Владимир Губайловский*, *Время поэзии*, Армон, 2007г., №3, *Stu*  
<http://magazines.russ.ru/arion/2007/3/>

Ժամանակակից իրականության քառսը խոսքի ու բառի միջոցով կարգի վերածելու ցանկությունը նկատելի է նաև Հ. Թամրազյանի պոեզիայում:

Նախաստեղծ գրվածքի մեկնությանը հակընթաց ուղղությամբ է մտնում Ն. Աթաբեկյանը: «Երկվորյակ» (2003), «Տարընթերցումներ» (2008) ժողովածուներում մի կողմում խոսքը նշանակետ-գրվածքին ուղղված պաքն է, մյուս կողմում՝ խաղի միջոցով բանաստեղծության առանցքի խաղարկումը, անսկիզբ ու անվերջ քառսային շարժումը, հեզնանքը, խաղարկային ձևերը:

**զ) Հակաբանաստեղծություն(անտիպոեզիա):**-Հակաբանաստեղծությունը կամ անտիպոեզիան տարբեր իրականությունների ու գեղագիտական հայացքների հակազդեցության դաշտում առաջացող անցումային իրողություն է, որը կայանում է հենց իր ընդդիմության՝ իրողություններն այլ կերպ, այլ աստիճանից արձանագրելու շնորհիվ: Հակաբանաստեղծական պոեզիայի համար հող են նախապատրաստում պատմական անցումային, հեղափոխական ժամանակաշրջանները: Ըստ էության, կանխատեսելի էր անկախության հաստատումից հետո մեր գրական գործընթացի մեջ նրա հայտնությունը: Մեր իրականության մեջ այս «ընդդիմադիր» պոեզիան հայտնվեց շնորհիվ Վիոլետ Գրիգորյանի բանաստեղծության («Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում» (1991), «Քաղաքը» (1998)): Հետագայում պոեզիայի նպատակաուղղված կազմաքանդման գործընթացին միացավ Արմեն Շեկոյանը, ում «Անտիպոեզիա» (2000) ժողովածուն կարծես անվանադրեց և ամբողջական տեսք հաղորդեց իրողությանը:

## **Գլուխ երրորդ** **ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ** **(Ժամանակ, բառ, երկիր, ապագա)**

Անկախության պոեզիայի զարգացման ընթացքը դարավերջ-դարասկիզբ անցումային ժամանակահատվածում նոր շրջադարձ է կատարում և հայտնվում պատմության ու իրականության նոր մարտահրավերներին հանդիման: Ժամանակակառուցման մատով շրջափուլային այս հատվածը նախընթաց փուլի անժամանակային ժամանակի անմիջական իրավահաջորդն է: Ժամանակի բովանդակավորման պարբերաբար կրկնվող ու չկայացող ընթացքը, հանդիպելով դարավերջյան վերջնասահման-պատին, կարծես բեկվում է՝ վերածվելով **կեսժամանակային** իրողության: Աշխարհի վերջի չկայացած վերջաբանը բանաստեղծին կանգնեցնում է **այստեղ և հիմա** տևող **սպամիֆականացված** իրականություն կառուցելու փաստի առջև: **Խոսքն ու բառը**, որպես նախասկիզբ գոյություն, դառնում են ժամանակային քառսի հաղթահարման միակ նախադրյալը: Ի վերջո, ժամանակը բովանդակավորման, տարածական հարթություն՝ **երկիր** կառուցելու փորձ է ձեռնարկում: Պետականություն կառուցելու նպա-

տակով սկսված ինքնորոշման պայքարը (որն անկախության այս շրջափուլի նախասկիզբն է նաև), շուրջ մեկ տասնամյակ հետո պոեզիայի տարածության մեջ կայացման հնարավորություն է ստանում:

**ա) Իրականության կեսժամանակային վերապրում:**– Իրականության կեսժամանակային վերապրումը բազմաբովանդակ իրողություն է: Մի կողմից այն պատմության անկատար դիմագիծը մարմնավորող ժամանակային կիսատոն է, մյուս կողմից՝ սկիզբ ու վերջ չունեցող ներկա պահ, ապրելու հնարավորություն, հոգևորին հանդիպելու ժամադրավայր: Ապոկալիպսիս և հոգևոր փրկություն՝ ահա այն երկու կետերը, որոնց միջև ընթանում է դարավերջ-դարասկիզբ շրջափուլի պոեզիայի զարգացման տարեգրությունը: Տարբեր ընթացակարգերով, սակայն նույն ամբողջական պահի, ակնթարթի իրականություն են ամրագրում Հովհ. Գրիգորյանի «Կես ժամանակ» (2002), Հ. Էդոյանի «Երեք օր առանց ժամանակի» (2005), «Փողոցի բաժանվող մասում» (2006) և Էդ. Միլիտոնյանի «Այս պահին» (2003) ժողովածուները:

Հ. Էդոյանի բանաստեղծության ընթացքը անկախության տարիներին գեղագիտական ու գաղափարական նոր փնտրտուքների փուլ է թևակոխում: Իրականության բովանդակավորման, տարածական կայացման փնտրտուքն ակնհայտ է: **«Երեք օր առանց ժամանակի»** ժողովածուն ժամանակային երեք փլվածքների մեջ այժմ և հիմա ընթացող կյանքի տևումն է: Այն տառապանքի, հիասթափությունների ու սպասումների ընթացք է, որին պետք է հաջորդի հարության, փրկության ժամանակը՝ հավերժությունը:

Էդ. Միլիտոնյանի «Այս պահին» ժողովածուում ժամանակի դիտարկումը կատարվում է այստեղ և հիմա տևող պահի հատույթում:

**բ) Պոեզիայի ու բառի տարածությունը:**–Անկախության պոեզիայի համապատկերային դիտարկումը ցույց է տալիս, որ նրա զարգացման ընթացքը մինչև դարասկիզբ տարուերթվում է ժամանակի անժամանակության կամ կիսատության, չկայացող իրականության ու տեքստի սահմաններում: Արդեն դարասկզբից ժամանակի չբովանդակավորված ընթացքից հոգնած բանաստեղծը ստանձնում է բառի ու խոսքի միջոցով երկրի տեսլականը ձևավորելու գործընթացը: Աշխարհայացքային ու գեղագիտական տարբեր համակարգեր ունեցող մի խումբ հեղինակներ ընդհանրություն են ցուցաբերում բառի ու խոսքի միջոցով տարածության տեսլական ստեղծելու գաղափարային հարթությունում: Այսպես օրինակ՝ Ա. Եփրեմյանի պոեզիայում երկիրն անուն է ստանում՝ միայն քառյակ կատարյալ Գրի ստեղծման տեսլականում: Հ. Թամրազյանի ներփակ բանաստեղծական համակարգում բառը ներքին հոգևոր տարածական կայացում է ապրում, **Ասացող երկիր** կառուցում:

Տարածություն ու երկիր կերտող բառը միանգամից մի քանի գործոնների ուղեկցությամբ բովանդակավորման հետաքրքիր ընթացք է ապրում Վարդան Հակոբյանի պոեզիայում:

Անկախության և պետականության կայացման ընթացքը՝ որպես սեփական կենսագրության գուգահեռ, վերապրում, ամրագրվում է Հուսիկ Արայի ժողովածուներում («Մարդու որդիները», «Սևագրություն», «Աստծո հետ խոսելու ժամանակը», «Ազատության հրապարակ»):

Ահա այս ընդհանուր հատկանիշներով ու միտումներով է առանձնանում անկախության շրջանի պոեզիան: Կարելի է ասել, որ ներկայացված օրինաչափություններով այդ շրջանն ավարտվում է իբրև ամբողջական շրջափուլ: Դրանից հետո գրական դաշտում կատարվող տեղաշարժերը, մասնավորապես՝ նոր ասպարեզ մտած բանաստեղծների լույս ընծայած բազմաթիվ շարքերն ու ժողովածուները բերում են բոլորովին այլ իրողություններ, որոնք դիտարկելի են միանգամայն նոր հարթության մեջ:

**զ) Նորերը. բանաստեղծության սպագան:** Անկախության շրջանի պոեզիայի նախընթաց վերլուծությունները ցույց են տալիս, որ անկախության տարիներին պոեզիայի զարգացման հիմնական պատասխանատվությունը հիմնականում ստանձնել են ավելի վաղ կայացման հասած բանաստեղծները: Հետաքրքիր է, որ բուն անկախության տարիներին՝ մինչ 2000-ական թթ., նոր անուններ, որոնք ունակ էին բանաստեղծական նոր աշխարհ ստեղծել, համարյա չեն հանդիպում: Միակ բացառությունը Հուսիկ Արայի պոեզիան է: Դարասկիզբն այս առումով բեկումնային էր: Ի հայտ եկան նոր անուններ, որոնք, ճիշտ է, գեղագիտական իրողությունների վերարտադրման հարթությունում շարունակում են ժառանգորդային ընթացքը, սակայն աշխարհակառուցման մոդելի ընտրության սկզբունքորեն նոր մոտեցումներ են ցուցաբերում: Չունենալով պատմական ժամանակի կտրուկ մարտահրավերներ, պայքարն այստեղ տեղափոխվում է տարաբնույթ թիրախներով ներքին պայքարի դաշտ (ազատության, տարրների հաղթահարման, քաղաքացիական տարաբնույթ պայքարներ և այլն): Մեծ հաշվով, անկախության այս սերունդը, հեղափոխություններ իրականացնող սերունդ չէ: Իդեալի կորստուր, Աստծուն չգտնելու, չտեսնելու հնարավորությունը լրիվ մենության են դատապարտում մարդուն, մղում նրան ինքնամփոփության:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության մեջ կատարված վերլուծությունները, քննարկված խնդիրները, առանձնացված միտումները ի մի բերելով՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին

1. Հայ իրականության մեջ պատմական ընթացքի վերջին ամենակտրուկ և կարևոր սահմանաբաժանային ժամանակահատվածը կապված է Հայաստանի երրորդ Հանրապետության ստեղծման ու կայացման ընթացքի հետ: Անկախության հռչակումը ոչ միայն բացարձակ կարևորություն է ստանում պատմական կարևոր փաստի, ազգային ինքնության հաստատման տես-

անկյունից, այլև մշակույթի, մասնավորապես՝ գրականության մեջ հիմնարար կերպով փոխում է ժամանակատարածական ընկալումը, աշխարհաստեղծման կարգի բոլորովին նոր մոդելներ առաջարկում:

2. Անկախության պոեզիայի գեղագիտական ու գաղափարական կողմնորոշումները ճիշտ գնահատելու համար մի շարք հետահայաց դիտարկումներ ենք կատարել առանձին սերունդների ու բանաստեղծական ուղղությունների հատկություն և հանգել հետևյալ եզրակացություններին.

ա. Դասական, քնարական ու կանոնիկ պոեզիա ստեղծող գրական ավագանին (Վահագն Դավթյան, Համո Սահյան, Միրվա Կապուտիկյան, Հրաչյա Հովհաննիսյան, Գևորգ Էմին և այլք), ում 1990-ականների սկզբին գրական դաշտում կարևոր դերակատարություն էր վերապահված, այդպես էլ չկարողացան հաղթահարել սահմանափակման պատնեշը, հարմարվել քառսային շարժմանը և իրականության նոր գաղափարական հարցադրումներին համապատասխան պոեզիա ստեղծել: Թերևս միայն Հ. Սահյանի հետանկախության տարիներին գրված առանձին բանաստեղծություններում է, որ նկատելի է նոր ժամանակների անցումայնությունը, իրականության հետ դեմ հանդիման կանգնած բանաստեղծի ողբերգությունը:

բ. Անկախության պոեզիայի ձևավորման վրա առավել վճռորոշ ազդեցություն ունեցավ հատկապես 60-ականների գրական սերունդը (Հովհաննես Գրիգորյան, Հենրիկ Էդոյան, Արտեմ Հարությունյան, Դավիթ Հովհաննես, Արմեն Մարտիրոսյան և մյուսներ): Անկախության առաջին տարիների բարդ հասարաքաղաքական, սոցիալական հարաբերությունները, հոգևոր և կյուրական արժեքների բախումը, բառի և խոսքի արժեգրկում բանաստեղծական այս սերնդի գեղագիտական ու գաղափարական նորարարությունները («անբանաստեղծական» բանաստեղծության մոդելի կիրառում, ժամանակի ու տարածության ոչ միացիծ ընկալում, բանաստեղծության լեզվի սահմանների ընդլայնում, փոխաբերության պատկերի մեծացում, մշակութաբանական շերտերի կիրառում) վերարտադրելու նոր հնարավորություն ընձեռեցին: Մասնավորապես այս համապատկերում աչքի է ընկնում Հով. Գրիգորյանի պոեզիան («Հրեշտակներ մանկության երկնքից», «Երկու ջրհեղեղի արանքում», «Կես ժամանակ»), որն իրեն բնորոշ արձակունակ տողի, իրականության վերարտադրման պարողիկ, պրոզայիկ կերպընկալման շնորհիվ ցուցադրեց ժամանակային բարդ իրականության մեջ հայտնված մարդու հասարակական ու հոգևոր ցանկությունների բախման, արժեգրկման ողջ դրամատիզմը:

գ. Անկախության առաջին տասնամյակը լուրջ փորձության ժամանակաշրջան էր 1970-ականների վերջին պոեզիայի ասպարեզում հայտնված և գրական շրջանակներում «լեզվապաշտ» անվանումը ստացած բանաստեղծության հետևորդների համար: Առանձնակի կարևորություն տալով լեզվի բացարձակ էությունը՝ բանաստեղծների այս սերունդը լեզուն ազատագրում էր սպառողա-

կան, տեղեկատվական օգտագործումից: Մյուս կողմից՝ առաջնային էր համարվում կոնկրետ ժամանակատարածական սահմանափակումներից դուրս հավերժի մեջ ընթացող մարդու հոգևոր ապրումների տարեգրությունը: Հասարակական-քաղաքական բարդ հարաբերություններով հագեցած պատմական ժամանակը լուսանցքում թողեց մարդկային հոգևոր ցանկությունները՝ առաջնային դարձնելով սոցիալական խնդիրները: Մերնդի բանաստեղծներից շատերը այս կամ այն չափով տուրք տվեցին ժամանակի հրամայականներին (միակ բացառությունը Հ. Մովսեսն է, ով ստեղծագործական որոշակի դադարի շնորհիվ կարողացավ անխառն պահել պոեզիայի սեփական տեսակը):

դ.1980-ականները պոեզիայի համար առավելապես ազատ տարածություն է, վակուումային վիճակ, որտեղ պոետական հայեցակարգերն ու սերունդները որոշակի ճշգրտումներ են կատարում: Մակայն պետք է փաստենք նաև, որ հենց 80-ականներին են ձևավորվել բանաստեղծական երկու շատ կարևոր հոսանքներ՝ հակաբանաստեղծական բանաստեղծությունը՝ «անտիպոեզիան» (Վիոլետ Գրիգորյան, Արմեն Շեկոյան), և բառի ու գրի նախաստեղծ էության փնտրտուքը բանաստեղծականացնող, դասական կառույցով, մշակութաբանական խաղարկումներով տարընթերցումային բանաստեղծությունը (Հրայր Թամրազյան, Ներսես Աթաբեկյան, Ավագ Եփրեմյան, Վահագն Աթաբեկյան և մյուսներ):

3. Անկախության պոեզիայի հիմնական գեղագիտական կողմնորոշվածությունը նախորդ գործընթացների արդյունք է: Զուտ գեղագիտական չափանիշների կիրառման առումով անկախության պոեզիան ոչ այնքան նորարարություն բերեց, որքան նախընթաց նորարարական ձգտումներով ստեղծագործող բանաստեղծական հոսանքներին շնորհեց փաստական, իրավական կարգավիճակ՝ նրանց գրական գործընթացի լիարժեք մասը դարձնելով:

4. Անկախության շրջանի պոեզիան նոր գործառույթներ է ստանձնում: Պատմական իրականությունը անվերջորեն թվագրման, ներկա իրականությունն դառնալու ճիգեր է գործադրում, սոցիալական-քաղաքական հարաբերություններն ու իրողություններն իրենց բացփաստական տեքստով հայտնվում են բանաստեղծության տարածքում: Մասնավորապես այս երևույթը նկատելի է Ա. Հարությունյանի («Նամակ Նոյին», «Հուլայի արձակուրդը») և Դ. Հովհաննեսի («Քրոնիկոն», «Նոր քրոնիկոն») ժողովածուներում:

5. Միֆական ջրհեղեղն անկախության բանաստեղծության ամենաբնորոշ մետաֆորն է և ոչ միայն մարմնավորում է հետանկախության ամբողջ տասնամյակի ժամանակային գաղափարական ուղղվածությունը, այլև առավել ընդհանրական ձևակերպում ստանալով՝ վերածվում հնի ու նորի, գաղափարական ու գեղագիտական տարբեր համակարգերի պայքարը խորհրդանշող արտահայտչամիջոցի: Զրհեղեղային գոյաբանության ներկայությունը (անմիջական կամ միջնորդավորված պատկերների միջոցով) արտահայտված



է Հովհաննէս Գրիգորյանի «Երկու ջրհեղէի արանքում», Արտեմ Հարությունյանի «Նամակ Նոյին», Ղուկաս Սիրունյանի «Տապանի վրա», Խաչիկ Մանուկյանի «Բիբլիական ընդմիջումներ» ժողովածուներում:

6. Հնի ու նորի պայքարը հանգեցնում է տարաբնույթ գեղագիտական չափանիշների բախման, ստեղծում անհավասարակշիռ, հակադրեցություններով հագեցած մի դաշտ, որի արդյունքում էլ հենց առաջանում է հակաբանաստեղծությունը («անտիպոեզիան»): Անտիպոեզիան դիմադրություն է պոեզիայի ընդունված չափանիշներին, մանիֆեստային բնույթ ունի և իր ամբողջ ծրագրային նպատակաուղղվածությամբ արտահայտվել է հատկապես Վիոլետ Գրիգորյանի «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում», «Քաղաքը» և Արմեն Շեկոյանի «Անտիպոեզիա», «Երևան հյուրանոց» բանաստեղծական ժողովածուներում: Դարասկզբին (2000-ականների սկիզբը), երբ արգելապատնէշները, կարծրատիպ դարձած իրողություններն ու ձևերը վերջնական կազմաքանդման ենթարկվեցին և իրականության պատկերման այլաձևություն համարվեց օրինաչափ երևույթ, անտիպոեզիան՝ որպես ընդդիմադիր, մանիֆեստային ակտ, դադարեց գոյություն ունենալ: Իր շարունակական ներկայության մեջ (Մարինե Պետրոսյան, Արփի Ոսկանյան, Նարինե Ավետյան) հակաբանաստեղծությունը պոեզիա կոչվելու իրավական լիարժեք կարգավիճակ ստացավ:

7. Անկախության առաջին տասնամյակի բանաստեղծությունը սիրային ապրումների արտահայտման տարածություն չի տրամադրում: Շատ ավելի հաճախ գործ ունենք սիրային թեմաների միջնորդավորված ներկայության, սիրային համարվող կարծրատիպային պատկերների խաղարկման ու ինքնահեզմանքի հետ:

8. Դարավերջ-դարասկիզբ անցումային ժամանակահատվածը պատմական ժամանակի ու հասարակական դերակատարության ինքնագիտակցման նոր մարտահրավեր է առաջադրում: Ժամանակակառուցման մասով շրջափուլային այս հատվածը նախընթաց փուլի անժամանակային ժամանակի անմիջական իրավահաջորդն է: Աշխարհի վերջի չկայացած վերջաբանը, որ հստակ կերպով արտահայտված է Հով. Գրիգորյանի «Կես ժամանակ», Հ. Էդոյանի «Երեք օր առանց ժամանակի» և Էդ. Միլիտոնյանի «Այս պահին» ժողովածուներում, բանաստեղծներին կանգնեցնում է այստեղ և հիմա ապամիֆականացված իրականություն կառուցելու փաստի առջև:

9. Խոսքն ու բառը՝ որպես նախասկիզբ գոյություն, դառնում են ժամանակային քառսի հաղթահարման միակ նախադրյալը: Ի վերջո, ժամանակը բովանդակավորման, տարածական հարթություն՝ երկիր կառուցելու փորձ է ձեռնարկում: Երևույթը առավել ակնհայտ ընգծվածությամբ երևակվում է 2000-ականներից հետո լույս տեսած բանաստեղծական ժողովածուներում՝ իր ներկայության շրջանակի մեջ ընդգրկելով աշխարհայացքային ու գեղագիտական տարբեր համակարգեր ունեցող մի շարք հեղինակների: Օրինաչա-

փոթյունը նկատելի է դառնում անգամ բանաստեղծական ժողովածուների վերնագրային ձևակերպումներում՝ Ղուկաս Սիրունյան «Ականջօղեր հայրենիքիս», «Վերջին խոսքի պես», Վարդան Հակոբյան «Թևերի հեռուն», «Բանաստեղծությունը սահմանից անդին», Ավագ Եփրեմյան «Գրվածք», Հրայր Թամրազյան «Ասացող երկիր», «Մայր հղացք», Հրանտ Ալեքսանյան «Բանի բարիտոնը, երկրի բարիտոնը», «Որպես դարձող մի բանագավր», Հուսիկ Արա «Աստծո հետ խոսելու ժամանակը», «Ազատության հրապարակ»:

10. Կարելի է ասել, որ ներկայացված օրինաչափությունները, այն է՝ ժամանակային անժամանակությունը, իրականության կեսժամանակային վերապումը, գեղագիտական նոր ձևերի փնտրտուքը, բառի միջոցով իրականություն, երկիր կառուցելու նախափորձը, պոեզիայի զարգացման այս շրջանը վերածում են ամբողջական շրջափուլային իրողության:

11. Բանաստեղծների նոր սերունդը (Գևորգ Թումանյան, Վահե Արսեն, Կարեն Անտաշյան, Հասմիկ Միմոնյան, Աննա Դավթյան, Անահիտ Հայրապետյան, Էդուարդ Հարենց, Թոնդրակ, Աշոտ Գաբրիելյան և մյուսներ) գեղագիտական իրողությունների վերարտադրման հարթությունում (ազատ բանաստեղծական տող, հեզանսք, խաղ, ֆարս) շարունակում է ժառանգորդային ընթացքը: Սակայն գաղափարական աշխարհակառուցման մոդելի ընտրության հարցում երևում են սկզբունքորեն նոր իրողություններ: Բոլորովին ուրիշ սերունդ է սա, որն աշխարհընկալման, ժամանակագագողության բոլորովին այլ դիտանկյուն ու տպավորություններ է հաստատագրում:

12. Իդեալի կորուստը, Աստծուն չգտնելու, չտեսնելու հնարավորությունը լիակատար մենության են դատապարտում մարդուն, մղում նրան ինքնամփոփության: Նոր սերնդի բանաստեղծության գերխնդիրը, թերևս, այդ մենության հաղթահարումն է:

### **Ատենախոսության թեմայով հրատարակված հոդվածներ**

1. Պարտություն անխուսափելի է, խաղը՝ շարունակական (Ներսես Աթաբեկյանի պոեզիայի դիմանկարի փորձ), «Նորք», 2008, թիվ 3, էջ 121-128:

2. Բնության ընկալման տարաբնույթ հայեցակարգերը անկախության շրջանի պոեզիայում, «Հայագիտական հանդես», 2014, թիվ 4 (28), էջ 186-194:

3. Լեզուն որպես ծես («Լեզվապաշտների» գրական հոսանքի գեղագիտական առանձնահատկությունները), «Մխիթար Գոշ», 2014, թիվ 2 (41), էջ 136-140:

4. Ընթացք՝ կյանքի շարժիչ ուժ (Վարդան Հակոբյանի պոեզիայի դիմանկարի փորձ), «Գարուն», 2005, թիվ 9, էջ 80-83:

**Акопян Асмик Хачиковна**

**Современная армянская поэзия (1990-2005 гг.)**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности “Новейшая армянская литература”.

Защита состоится в 14:30 15 апреля 2015 г.

на заседании Специализированного Совета ВАК 012 при ЕГУ по адресу: г. Ереван, ул. Абовяна 52/А, ЕГУ, филологический факультет, аудитория 202.

**Резюме**

В диссертационной работе исследована поэзия, созданная в Армении после провозглашения независимости страны, изучены тенденции ее развития в контексте общего хода истории. В многоплановом разрезе были рассмотрены эстетические концепции и основные вопросы идейного характера. В первой главе работы мы обратились к эстетическим и идейным системам поэтических поколений и течений десятилетий, предшествующих независимости. Возможным единым присутствием поколений и посредством поэтических течений была сделана попытка уточнить и представить существующие эстетические концепции, проанализировать теоретические положения и обоснования поэзии каждого поколения. Чтобы получить более ясную и основательную картину, были проанализированы также сборники стихов, которые, с одной стороны, в определенных чертах отражают эстетику данного поэтического течения или поколения, с другой стороны, дают общее представление о так называемом первоначале поэзии независимости, иными словами, о тех основных тенденциях, которые в дальнейшем обеспечили коекакие продолжения.

Во второй главе работы представлены восприятие времени, идейные изменения и эстетическая ориентация поэзии независимости. В контексте новых императивов исторического стихийного времени были рассмотрены новые социальные ценностные системы, которые ведут культуру и литературу к новым идейным преобразованиям.

В этот циклический период поэзии независимости выделяющимся и важным наблюдением является возникновение метафоры потопа, которая метко характеризует эпоху. Потоп – борьба старого и нового, повторяющееся возвращение времени, которое приводит к чувству заблуждения в реальности, безвременье времени. Время не наполняется смыслом, не утверждается в конте-

ксте истории. Настоящее в заблуждении, будущее бесперспективно, впереди конец столетия.

Борьба старого и нового в области эстетических форм привносит явление антистиха или антипоэзии, которое утверждается именно благодаря своему сопротивлению, фиксированию явлений по-иному, в другой мере.

Антипоэзия—это сопротивление принятым нормам поэзии, имеет манифестный характер и реализует четкую целенаправленную программу.

В третьей главе показано, что в части построения эпохи этот циклический период является непосредственным правопреемником безвременного времени предыдущего этапа. Слово и речь, как первоначало существования, становятся единственной предпосылкой для преодоления временного хаоса. В конце концов, время предпринимает попытку наполниться смыслом, создать пространственную платформу – построить страну. Борьба за самоопределение, начатая с целью построения государственности (которая также является первоначалом поэзии независимости) примерно через десятилетие получает возможность утвердиться в поэтическом пространстве.

## **Hasmik Khachik Hakobyan**

Contemporary Armenian Poetry (1990-2005) Dissertation for the degree of Candidate of Philology in "Contemporary Armenian Literature" specialty. Dissertation will be defended on 15 April 2015 at 14:30, at the meeting of the Specialized Council WAC 012 at YSU at Address: Yerevan, Abovyan 52/A, YSU, Faculty of Philology, the audience is 202.

### **SUMMARY**

The dissertation examines the poetry created in Armenia after independence and its development tendencies in the panorama of the course of history. Both the aesthetic concepts and ideological issues were examined in multidimensional sections. The first chapter of the treatise deals with the aesthetic and ideological systems of the poetry generations and trends of pre-independence decades. Through the possible presence of combined generations and poetry trends, an attempt has been made to specify and present the existing aesthetic concepts and to analyze the theoretical propositions of the poetry of each generation and their validity. In order to have a clearer and well-grounded picture, also those poetry collections are examined which, on the one hand, demonstrate in certain features the aesthetics of the given poetry trend or generation, and, on the other hand, convey concise ideas about the so-called pre-beginning of the independence poetry, in other words - about those main tendencies which later provided certain continuations.

The second chapter of the treatise presents the time perception, ideological changes and aesthetic orientation of the poetry of the independence period. In the panorama of the new imperatives of historical spontaneous time, the new social value systems have been considered which led the culture and literature to new ideological reformulations.

The start of our reality in 1990 s (martial, blockaded reality, dark and cold winters, public, socio-economic new relations, psychological depression, powerlessness, unpromising future made the mythical structure of world flood. The Flood is a struggle of the new and old, an iterative return of time which causes a feeling of delusion in reality, a timelessness of time. Time does not obtain contents, does not establish itself in the panorama of history. The present is bewildered, the future is unpromising and with limiting end of century.

Placing as the primary issue the problem of self existence, the poetry reformulates previous ideological orientation, the choice of topics, new criteria's' and ideals' definition. As the performer of public functions filled with factual

material the poetry is featured especially in the poetry of the first years of independence

The struggle of the new and old generates in the field of the aesthetic forms the phenomenon of anti-poetry which establishes itself through its own opposition, that is, through recording the reality in another way, from another level. Anti-poetry is a resistance to the established norms of poetry, has a nature of manifest and carries out a clearly devised purposeful programme.

The third chapter demonstrates that this phase in terms of time-construction is the direct successor of the timeless time of the previous phase. Already at the beginning of the century the poet, tired of non subject matter, starts to form the process of world space vision through word and speech. A group of authors having different ideological and aesthetic systems demonstrate generality in creating space vision in ideological area. The speech and word, as pre-beginner entities, become the only premise for overcoming the time chaos. Finally, time endeavors to create a spatial, content-filled plane-an earth. The struggle for self-determination, started with the goal of state-building (and being also the pre-beginning of this phase of independence), is provided after almost a decade with possibilities to establish itself in the space of poetry.

At the beginning of the century (2000's) new names appeared which exactly continue the successor 's process in aesthetic realm of reality reproduction, but fundamentally have new approach in the world building model's choice. Lack of historical sharp challenges moves the fight to inner struggle field with its various targets (freedom, overcoming taboos, civil various struggles, etc.) . In its common sense , this generation of independence ,is not one to implement revolutions. The loss of ideal ,not finding God, not seeing the possibility , condemns the man to full loneliness, makes him to be self-contained.